

որովհետեւ երբ կէս ժամէն արեւին կէս սկաւառակը բարձրացած է , արդէն շատ թանձր կ'երեւայ , որպէս թէ ամբողջովին բարձրացած ըլլար հորիզոնին վրայ : Հոն՝ իր ամբողջ դարաւանդներով ու վառվռուն մթնոլորտովը կը ներկայանայ մեծ աստղը :

Լուսնին մէջ մթնոլորտի զգալի պակասը՝ մեր լեռներուն վրայ եղած կլիմային համահաւասար արդիւնք մը կուտայ : Այդ լեռներու մէջ օդի անօսրութիւնն այնքան շեշտուած է , որ արեւն անկարող կ'ըլլայ իր ջերմութիւնը թափանցելու :

Ֆլամարիոնի հետեւողութեամբ՝

ՀՐԱՏ

Պ Ի Ղ Ա Տ Ո Ս Ի Թ Ղ Թ Ի

Ի լրումն «Բանասէր»ի անցեալ տարւայ Դ պրակին մէջ զետեղւած «Թուղթ Պիղատոսի դատաւորի , զոր յետ խաչելութեանն Քրիստոսի գրեաց առ Տիբերիոս կայսրն Հռոմայ» , հրաւիրում եմ արդոյ բանասէրներին ուշադրութիւնը նաեւ «Պիղատոսի մահը» գրութեան վերայ , որ շարունակութիւնն է յիշեալ Պիղատոսի Թղթի (1) :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Փետր. 22-ին 1902 թ.

Թիֆլիս

••

Եւ իբրեւ եհաս հրովարտակն ի Հռոմ , եւ ընթերցան առաջի կայսերն , լինելն ընդ նմա բազումք ի մեծամեծաց , զոր իբրեւ լուան , զարմացան , եւ զահի հարան , եւ երկեան յոյժ եւ ասեն . Ուրեմն չարութիւն Պիղատոսի՞ արար զխաւարն զայն եւ զշարժն ամ. Թիեզերաց : Եւ բարկացեալ կայսրն , առաքեաց զինուորս եւ ետ ամել զՊիղատոս կապանօք ի Հռոմ : Եւ նստեալ կայսրն ի տաճարն կոոց սնկղիտոսօք եւ ամ. մեծամեծօք , եւ ետ ամել զՊիղատոս առաջի իւր եւ ասէ ցնա . Երկցըս թշուառակա՛ն , ընդէ՞ր իշխեցեր եւ յանդգնեցար գործել զայնպիսի իրս յայրն այն Որդին Ածյ. եւ կորուսեալ զամ. Թիեզերս :

Եւ ասէ Պիղատոս . Ո՛վ ինքնակալ , անպարտ եմ ես . այլ նախարարքն հրէից եւ ամ. ժողովուրդք եղին դատապարտք նորա :

Ասէ կայսրն . Եւ ո՞յք են , զոր ասես վասն նոցա :

Ասէ Պիղատոս . Հերովդէս , Փիլիպոս , եւ Արքեղայոս , Աննա , եւ Կայիափա , եւ այլ քահանայքն , եւ բազմամբոխն ժողովուրդն :

Կայսրն ասէ . Եւ զիա՞րդ դու լսող եղեր նոցա :

Ասէ Պիղատոս . Լիրբք եւ անհնազանդք են իշխանաց ազգն հրէից :

(1) Վեր. հ. Եսայի վ. Տայեցի իր «Անկանոն դիրք Նոր Կտակարանաց» աշխատութեան մէջ հրատարակած է թէեւ , բայց ներկայս տարբեր օրինակէ մը քաղուած լինելուն՝ այստեղ կը հրատարակենք վերստին :

Ասէ կայսրն . Պարտ էր քեզ պահել զգուշութեամբ զայնպիսի Փըր-  
կիչն աշխարհի , թէ կամաւ իւրով եկեալ էր 'ի խաչիլ , եւ նա ինքն  
էր Քրիստոս՝ թագաւոր Հրէից :

Եւ եղև իբրև յիշեաց կայսրն զանուն Յի . , ամ . կուռքն ան-  
կեալ , փշրեցան եւ եղևն մանր իբրև զփոշի : Իսկ կայսրն եւ ամ . բազ-  
մութիւն պակեան ահիւ , եւ յարուցեալ՝ գնացին՝ գողալով : Եւ ի վա-  
ղիւ ուշաբերեալ կայսրն եւ արարեալ հանդէս , նստաւ 'ի հարէախիօնն  
եւ ետ ածել զՊիղատոս եւ ասէ ցնա . Ո՛վ եղկելի անձն , ահաւասիկ  
վասն չարեաց կործանեցան զիքն մեր . արդ ասացես մեզ՝ ո՞վ էր ահա-  
ւորն այն , որոյ անունն կործանեաց զամ . չաստուածսն :

Ասէ Պիղատոս . Ճշմարիտ յիշատակարան նորա գրեալ է ի մարգա-  
րէ . սն հրէից՝ թէ ոչ ոք է նման նմա յած . սն հեթանոսաց , յորում եւ  
ես իսկ հաւանեցայ սքանչելեացն , զորս տեսի եւ զոր լուայ :

Եւ ասէ կայսրն . Եւ ո՞պ . ածէր 'ի վերայ նր . չարչարանս , երբ  
այդպէս ասես եւ վկայես զՆմանէ . ո՞չ ասաքէն յաղագս հակառակու-  
թեան թագաւորութեանս իմոյ , որպէս եւ գրեաց ատ իս արքայն Հա-  
յոց մի անգամ եւ երկիցս վասն չարութեան քո :

Ասէ Պիղատոս . Ոչ այդպէս , արքա՛յ , Տէ՛ր իմ կայսր , այլ յա-  
ղագս անիծից եւ անօրէն ազգին հրէից , զի նենգեցին ինձ :

Տրամեցաւ կայսրն եւ գրեաց ամ . սինդիստոսօքն եւ ամ . մեծամե-  
ծօքն հռովմայեցոց վասն կատաղի ազգին այսպէս .

« Լիկիանոսի՝ նախարարի կողմանցդ խնդալ : Ծանիցես զյանդգնու-  
թիւն հրէիցն Երուսաղէմի , զոր ինչ արարին անօրէնութիւն 'ի վերայ  
Յի . Տն . Որդոյն Ա . յ . այն որ 'ի Պիղատոսէ յամբարշտէ դատապարտեալ  
'ի խաչ , որ յաղագս անիրաւ չարչարանացն խաւար կալաւ զամ . ծագս  
երկրի մինչեւ մերձ ի կորնչել : Արդ կամ լիցի քեզ եւ իմով հրամանաւս  
երթիցես ամ . զօրօքդ 'ի կողմդ այդ եւ գերելով գերեսցես զամ . բնա-  
կիչս նորա , եւ հրամանաւս իմով ածիցես 'ի վերայ նոցա զամ . վիշաս  
եւ զչարս նեղութեանց եւ նենգութեանց , ըստ արժանեաց նոցա . այլ  
եւ ցրուեսցես զչար ազգն զայն ընդ ամ . հեթանոսս 'ի ծառայութիւն ,  
զի մի բնաւ երեսցցին նոքա 'ի վերայ երկրի . քանզի լի են նոքա բա-  
զում չարութեամբ , որպէս եւ լուաք յԱրգարու . թագաւորէն Հայոց : »

Իբրև էսս հրամանս զայս , Լիկիանոս իսկոյն ցասմամբ եւ բար-  
կութեամբ ժողովեալ 'ի մի զզօրս իւր , երթայր 'ի վերայ Հրէաստանի  
եւ Երուսաղէմի . եւ զորս գտանէր 'ի ճանապարհի , կտտամահ ազգի  
ազգի չարչարանօք սատակէր : Եւ եկեալ 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ,  
պատեալ պաշարեաց զնա , զի եւ ոչ մին կարաց փախչել . եւ կալեալ  
զնոսա զենէին ոչ ողորմելով ծերին եւ ոչ տղային , ոչ երիտասարդին  
եւ ոչ կուսին . այլ սուրն 'ի վերայ եղեալ կոտորէին անխնայ . եւ պիղծ  
արիւնք նոցա լցաւ ամ . փողոցս քաղաքին , եւ գնայր , որպէս առու .



ԱՄՍԱՂՈՒ ՆՈՐԱՎԱՆԻՑ ԳՍԻԹԻ ԽՍՉԱՔՍՐԵՐԻՑ

(Ներսի դրան ա. կողքին)

եւ զայլս բազում առեալ տարան ի գերութիւն եւ ոչ մնաց քաղաք, կամ գիւղ, կամ գաւառ, որ ոչ յափշտակեցին, եւ տարան ի ծառայութիւն 'ի սփիւռ հեթանոսաց եւ 'ի աշխարհն լատինացոց, եւ մաշեցան ի սուր սուսերի. եւ եղեն նախատինք եւ այսպէս կատականաց ամ. ազգաց տիրասպան ազգն Հրէից, եւ այս վրէժխնդրութիւն եղեւ վասն անպարտ արեանն Քի., զոր հեղին:

Եւ զայս լուեալ կայսրն Տիրերիոս, բերկրեցաւ սիրտն եւ հոգին իւր. եւ դարձեալ կոչեաց զՊիղատոս եւ ասէ. Ո՛վ ժանա եւ չար, ո՞րպէս իշխեցեր տալ զՅս. 'ի խաչ հանել:

Եւ նա ասէ. Ո՛վ ամենակալ կայսրդ, եթէ ոչ էի տուեալ զնա, զիս սպանանէին, զի ազգն այն չար է եւ վատ:

Եւ բարկացեալ կայսրն՝ ասէ ցնա. Ձեռ գու արժանի կալոյ կենդանի ի վր. երկրի, կամ տեսանելոյ զարեգակն, զի յիսուսադատ եղեր եւ զանմեղն ի մահ մասնեցեր. արդ եւ ես քեզ չար մահուամբ սատակեմ:

Եւ հրամայեաց բերել տապակ մի մեծ պղնձի, շնուլ 'ի ներս ձէթ եւ ձիւթ. եւ զՊիղատոս մերկացուցեալ արկին ի տապակն յեռացեալ, եւ լուցին կրակ բազում, եւ ջեռուցին զձիւթն, որ յեռայր եւ բարձրանայր ճայթմամբ. եւ այնպէս սաստիկ եռացմամբն որպէս գործելի դարձաւ մարմինն նորա, որպէս եւ հոգին սեւ: Եւ այսպէս կորեաւ չարն չարեաւ, եւ բարձաւ ամբարիշտն 'ի միջոյ, եւ նոյնպէս հրէայքն գերեցան, կոտորեցան, բնաջինջ եղան վասն անօրէնութեանց իւրեանց: Եւ Քսի. մարդասիրին փա՛ռք յաւիտեանս ամէն:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՋՈՒԼՅԱՅԻՑ ԱՐԱՔՍԻ ԱՓԵՐՈՒՄ ԴԷՊԻ ԴԱՐԱՇԱՄԲ (1)

Ա.

Մի քանի օր Ջուլֆայում մնալուց յետոյ, վերջապէս հեռացայ այդ «ճակատագրական» վայրից եւ սկսեցի ուղեւորուիլ արեւելահարաւային կողմը. Արաքսի պարսկական ափերով քայլամուտք եւ միայնակ,

(1) Հեղինակի այս գրութեան նախորդ մասերը լոյս տեսած են, «Իմ ճանապարհորդական յիշողութիւններ Պարսկաստանում» վերնագրով, «Բազմավէպ»ի 1897 եւ 1898 թուականներու պրակներուն մէջ: Այժմ մենք կսկսինք հրատարակել շարունակութիւնը:

Մ. ԽՄԲ.